ՀՈԳԻ ԵՒ ՀՕՏ

Այն ինչ գարուն ծաղկատեսիլ և պճնազարդ
Նորոգի,
Թռչուն նորեկ ի դաշտօրայս և ի մայրիս երևի։
Ականակիտ աղբերց վտակք կարկաջ յաւէրժ տան
հորդան,
Բուրաստանեայց ծառոց ծաղկամբ տեսիլք մարդ-
կան զուարթանան։
Ցայնժամ և հօտք շահամատոյցք ի դալարիս ա-
բածին,
Անդ ընդ ծառով հովիւն հսկող հնչէ զսրինգն
ի ձեռին։
Դէտակն ունի անքուն ակամբ ի հօտ անմեղ իւր
խաշանց,
Զվարատիլ մի կորնչիլ և կուր մատնիլ գա-
զանաց։
Այլ երբ արեգն չափէ զՈղիմպ համբոյր ծովուն
տայ խորոց,
Ի մի խմբէ զոչխարս ածէ ի փարախին լայն ի ծոց։
Սապէս և մեք, Հայր Վեհափառ, հօտ եմք հով-
ուիդ քրտնաջան,
Ցարօտս ուսման մեք ճարակիմք խնամով սի-
րոյդ Հայրական։
Դու պատրաստես ըզպիտոյից մեր հոգևոր ըզկարիս,
Զի կարասցուք ուսմամբ մերով մեք վայելել
ըզբարիս։
Քև աճեսցուք օր ըստ օրէ յասպարիզի գիտութեան,
Քև արգաւանդ և պտղաբեր միտք մեր լիցի
մանկական։
Ուստի ըզմեզ երախտապարտ քո վարկանեմք ա-
ռաջի,
Զեզ գյարութեան շնորհաւորեմք այս հրաշա-
փառ տօն Փրկչի։
Ուխտեմք Զեզ, Հայր գորովագութ, զի սերտ սի-
րով վառեսցուք,
Եւ հարազատ որդիք ազգի և հայրենեաց մեք
լիցուք։

Ընդ Գ. Դասու Եղեգ. Հոգ.
Դպրց. Հայոց Երզնկայ

Թովմաս Ի-ղիշէանց։

Ի ԼԻՆ Աղբիւր 1871 -դ
Ի Շ-էն։

ԲԱՆԲ ԸՆԴ ԱՐՇԱԼՈՒՍՈՑ

Ո՞վ արշալոյս լուսածաւալ փութա՛ ծագեա՛ դու
առ իս,
Զի՞ յամեցար ի թագստի քանզի տապիմ յան-
կողնիս։
Ահա աչք իմ նուաղեցան ակնունելով քո եղից,
Քեզ փափագի բնութիւն ամէն ի մութ պա-
տեալ տրտմալից։
Դու փարատես դու հալածես զխաւար տրխուր
գիշերոյ,
Ո՞վ գեղեցիկ աւետաւորդ պայծառ տունջեան
մեզ լուսոյ։
Հասեր այժ, ցանկալիդ իմ, տեսլեամբ քոյով զը-
ուարթացայ,
Այլ երբ մրուայլ մրտաց իմոց զարփին տեսցէ
ոսկեկայ։
Մի՛ տաղնապիր ո՞վ պատանի քեզ լոյս հասցէ
բերկրալի,
Փութա՛ արագ և դուն գործեա՛ տեսոյն լինիլ
արժանի։
Ահա՛ զքեզ Հայրն Վեհափառ թեւօք առնէ հո-
վանի,
Ի ձէնջ մերժէ զանպիտութեան խոր մառա-
խուղ թախծալի։
Ահա՛ բազուկք իւր ի տարած իրրև զարծուի սի-
բարաց,
Զձեզ ընկալնու յիւրն ի միջնոցն ի վայր տա-
նէ սուրբ ուսմանց՝
Դուք մի՛ հեղգայք, այլ ջան ի գործ ձեռք ի վաս-
տակ ժըրաջան,
Զարգուն ի չափ փութով ածիք լուսով բա-
ռեաց գիտութեան։
Մինչ ի վախճան կենաց Ձերոց լիջի՛ք հաստչին
զոհաբան,
Ներուք ազգի՝ եկեղեցւոյ հաւատարիմ Դուք
պաշտպան։

Ընդ Գ. Դասու Եղեգ. Հոգ.
Դպրց. Հայոց Երզնկայ
Յարութիւն Տէր Պետրոսեանց։

Ի ԼԻՆ Աղբիւր 1871 -դ
Ի Շ-էն։